

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**«Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարի եւ դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին**

**Պաշտոնապես  
հաստատված  
տեքստ**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարի եւ դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին**

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքում ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ հանցավոր ոտնձգություններին հակազդելու համակարգի կատարելագործման նպատակով «Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարի եւ դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

**համաձայնեցին հետեւյալի մասին.**

### Հոդված 1

Համաձայնագրում կատարել հետեւյալ փոփոխությունները.

1. Նախաբանի վեցերորդ պարբերությունում «ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության կանխման եւ դրանց վերադարձի ապահովման համար» բառերը փոխարինել «ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարի եւ դրանց վերադարձի ապահովման գործում» արտահայտությամբ:

2. 1-ին հոդվածի յոթերորդ պարբերությունում «հափշտակված ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու մասին եւ որոշումներ ընդունելու դրանք վերադարձնելու մասին» բառերը փոխարինել «ավտոտրանսպորտային

միջոցների հափշտակության դեմ պայքարը կազմակերպելու եւ դրանց վերադարձն ապահովելու նպատակով, ինչպես նաեւ որոշումներ ընդունելու ավտոտրանսպորտային միջոցները վերադարձնելու մասին եւ ծանուցելու ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ՝ այն վերադարձնելու հարցում վերջինիս շահագրգռվածության բացակայության մասին» արտահայտությամբ:

3. 1-ին հոդվածի ութերորդ պարբերությունը՝

«իրականացնելու» բառից հետո լրացնել «ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքար,» արտահայտությամբ,

«իրավախախտում կատարելու դեպքում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ ստանալու այլ Կողմերի տվյալների տեղեկատվական բազաներում առկա՝ ավտոտրանսպորտային միջոցների մասին տեղեկություններ» արտահայտությամբ:

4. 3-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Յուրաքանչյուր Կողմ սահմանում է կենտրոնական իրավասու մարմին եւ սույն համաձայնագրի դրույթների կիրարկման համար պատասխանատու իրավասու մարմիններ (նշելով լուծվող հարցերի շրջանակը) եւ այդ մասին ծանուցում ավանդապահին:»:

5. 4-րդ հոդվածում՝

1-ին կետի առաջին պարբերությունում «ավտոտրանսպորտային միջոցների մասին այն տեղեկատվական բազայի պահպանությունը, որը պետք է ընդգրկի տեղեկություններ՝» բառերը փոխարինել «ավտոտրանսպորտային միջոցների մասին տեղեկատվական բազայի ձեւավորումը եւ պահպանությունը, որն առկայության դեպքում ընդգրկում է տեղեկություններ՝» արտահայտությամբ.

1-ին կետի «ա» ենթակետը «Կողմերից մեկի տարածքում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ դրանց նույնականացման համարների, գրանցման փաստաթղթերի եւ գրանցման նշանների մասին» արտահայտությամբ.

1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե», «զ», «է», «ը» ենթակետերով.

«ե) հաշվառումից հանված ավտոտրանսպորտային միջոցների մասին.

զ) պետական սահմանը հատող ավտոտրանսպորտային միջոցների մասին.

է) այն ավտոտրանսպորտային միջոցների մասին, որոնց վերաբերյալ տեղեկությունները պետական սահմանը հատելիս օրենսդրությանը համապատասխան ենթակա են մուտքագրման՝ մաքսային մարմինների տեղեկատվական բազաներ.

ը) այն ավտոտրանսպորտային միջոցների մասին, որոնք վնասվել են այնպիսի ճանապարհատրանսպորտային պատահարի, հրդեհի, տարերային աղետի եւ այլ հանգամանքների կամ երրորդ անձանց գործողությունների հետեանքով, որպիսիք այդ թվում հանգեցրել են դրանց կոնստրուկտիվ կործանմանը:»:

6. 4-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կողմերից յուրաքանչյուրը, օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաներ, ապահովում է այլ Կողմերի իրավասու մարմինների կողմից վերոնշյալ տեղեկատվական բազաներում առկա տվյալների ստացման հնարավորությունն իրական ժամանակի ռեժիմում, ինչպես նաեւ այլ Կողմերի իրավասու մարմինների հարցման դեպքում եւ նախաձեռնության կարգով ապահովում է ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարի հարցում հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության օպերատիվ տրամադրումը:

Տվյալների վերոնշյալ տեղեկատվական բազաներից տեղեկություններ ստանալու հարցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) հայցող իրավասու մարմնի անվանումը եւ հայցվող այն իրավասու մարմնի անվանումը, որին ուղարկվում է հարցումը,

- 2) Համաձայնագրի համապատասխան կետին կատարվող հղումը,
- 3) գործի էության համառոտ նկարագիրը,
- 4) տվյալների տեղեկատվական բազաներից հայցվող տեղեկությունների ցանկը:

Հարցումը ձեակերպվում է գրավոր եւ ստորագրվում է հայցող իրավասու մարմնի պետի (ղեկավարի) կամ նրա տեղակալի կողմից:

Հարցումը կատարվում է այն ստանալու օրվանից հաշված մեկ ամիսը չգերազանցող ժամկետում: Այդ ժամկետը կրճատելու անհրաժեշտության դեպքում հարցման տեքստում կատարվում է համապատասխան վերապահում՝ դրա պատճառների եւ հարցումը կատարելու ցանկալի ժամկետի մատնանշմամբ:

Հարցման հիման վրա տեղեկատվության տրամադրումը կարող է մերժվել, եթե՝

- 1) հարցումը չի համապատասխանում սույն կետի երկրորդ պարբերությունում մատնանշված ձեւին,
- 2) հարցման կատարումը կարող է վնաս հասցնել ինքնիշխանությանը, ազգային անվտանգությանը կամ հակասում է Կողմի օրենսդրությանը կամ Կողմերի միջազգային պայմանագրերին,
- 3) հարցումն օբյեկտիվորեն չի կարող կատարվել հայցվող իրավասու մարմնից անկախ պատճառներով:

Հայցող իրավասու մարմինն անհապաղ, գրավոր տեղեկացվում է հարցման կատարումը մերժելու, ինչպես նաեւ մերժման պատճառների մասին:»:

7. 4-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3. Տվյալների վերոնշյալ տեղեկատվական բազաներում պարունակվող տեղեկությունների ստացման եւ տրամադրման կարգը սահմանվում է առանձին փաստաթղթով:»:

8. 7-րդ հոդվածի 1-ին կետում՝

«կարող է ուղարկել հարցում» բառերը փոխարինել «ուղարկում է հարցում» բառերով,

«ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու մասին» արտահայտությունից հետո ավելացնել «կամ գրավոր ծանուցում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ՝ այն վերադարձնելու հարցում վերջինիս շահագրգռվածության բացակայության մասին:» բառերը:

9. 8-րդ հոդվածի 2-րդ կետում «քսան» բառը փոխարինել «երեսուն» բառով:

10. 8-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայցվող Կողմի կենտրոնական իրավասու մարմինը լրացուցիչ տեղեկատվությունը ստանալուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում, իրազեկում է հայցող Կողմի կենտրոնական իրավասու մարմնին հարցման ուսումնասիրության արդյունքների մասին:»:

11. 9-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ծանուցումը ստանալու պահից մեկ տարին լրանալուց հետո չպահանջված ավտոտրանսպորտային միջոցը, ինչպես նաև այն ավտոտրանսպորտային միջոցը, որի մասով ստացվել է ծանուցում՝ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ՝ այն վերադարձնելու հարցում վերջինիս շահագրգռվածության բացակայության մասին, կարող է ընդգրկվել այն Կողմի եկամուտների կազմում, որի տարածքում այն հայտնաբերվել է գտնվում է՝ տվյալ Կողմի օրենսդրությանը համապատասխան:»:

12. 11-րդ հոդվածի 1-ին կետից «բ» եւ «գ» ենթակետերը հանել:

## Հոդված 2

Սույն արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման

օրվանից 60 օրը լրանալուց հետո եւ ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Սույն արձանագրությունը ստորագրելիս ցանկացած պետություն իրավասու է հայտարարել, որ ժամանակավորապես այն կիրառելու է սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված օրվանից տարբեր այլ օրվանից:

### **Հոդված 3**

Ուժի մեջ մտնելուց հետո սույն արձանագրությունը բաց է ԱՊՀ մասնակից ցանկացած պետության կողմից դրան միանալու համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին փոխանցելու միջոցով:

Միացող պետության համար Արձանագրությունն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Կատարված է Բաքու քաղաքում 2018 թվականի հուլիսի 20-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն արձանագրությունը ստորագրած պետություններից յուրաքանչյուրին կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության  
կառավարության կողմից՝**

**Ռուսաստանի Դաշնության  
կառավարության կողմից՝**

*Հայտարարությամբ [ստորագրություն]*

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության կողմից՝**

**Բելառուսի Հանրապետության  
կառավարության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Ղազախստանի Հանրապետության  
կառավարության կողմից՝**

*[ստորագրություն]*

*(վերապահումով)*

**Ղրղզստանի Հանրապետության  
կառավարության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Մոլդովայի Հանրապետության  
կառավարության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Տաջիկստանի Հանրապետության  
կառավարության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Թուրքմենստանի  
կառավարության կողմից՝**

**Ուզբեկստանի Հանրապետության  
կառավարության կողմից՝**

**Ուկրաինայի  
կառավարության կողմից՝**



## Հավելված

Ղազախստանի Հանրապետության  
կառավարության 2018 թվականի  
հունիսի 12-ի թիվ 424 որոշման

**Ղազախստանի Հանրապետության վերապահումը  
««Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարի եւ  
դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ Պետությունների  
Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության  
մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ  
կատարելու մասին» արձանագրության առնչությամբ**

««Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարի եւ  
դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ Պետությունների  
Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին»  
2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու  
մասին» արձանագրության 1-ին հոդվածի 5-րդ կետի «զ» ենթակետի դրույթը չի  
տարածվում Ղազախստանի Հանրապետության վրա»:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ

**«Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարի եւ դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության առնչությամբ**

«Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարի եւ դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրի 4-րդ հոդվածի առնչությամբ, որը փոփոխվում է այսօր ստորագրվող Արձանագրությամբ, Ռուսաստանի Դաշնությունը հայտարարում է, որ Արձանագրությամբ փոփոխվող՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետով նախատեսված՝ պետական սահմանը հատող ավտոտրանսպորտային միջոցների մասին տեղեկատվությունը չի տրամադրելու:

Ռուսաստանի Դաշնության  
ներքին գործերի նախարար՝

[ստորագրություն]

Վ. Կոլոկոլցեւ

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018 թվականի հուլիսի 20-ին ստորագրված «Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարի և դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» Արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**